ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի սեպտեմբերի 3-ի հարցման կարգով նիստի

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2021 - 2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ հայտարարված գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԳԿՀԴՆ - 2022»** մրցույթի շրջանակներում՝ **«Դիմակայության ամրապնդումը Covid-19 համավարակի պայմաններում»** թեմայով (հայկական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան**, գերմանական կողմի խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր **Dr. Alexander Steckelberg**) համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին:

3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի «Գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի N 1 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 - 2 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Առաջարկվում է գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ընդգրկել Գյումրու մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Պետրոսի Պետրոսյանին**:

4. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի «Գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի N 3 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 - 4 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Առաջարկվում է գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի կազմում ընդգրկել Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արփինե Երեմի Հովակիմյանին**:

Գիտական քարտուղար **Ն. Դարբինյան**
2021 թ. սեպտեմբերի 3
Երևան